հասնում 40 անգլիական մղոնի՝ Բունգո նեղուցի դիմաց, իսկ միւս մասերում ընդհանրապէս 8 մղոնից աւելի չէ:

Տեղ-տեղ անցքը այնքան նեղ է, որ իրար հանդիպող շոգենաւերը հազիւ են անցնում: Նաւը շարունակ լողում է կղզիների մի ամբողջ ցանցի միջով, մերթ մանրիկ, մերթ քիչ աւելի մեծ կղզիների, երբեմն հարուստ բուսականութեան մէջ թաղուած, երբեմն նկարչական մերկ ժայռերով ծածկուած. բայց միշտ էլ քմահաճ ու կենսուրախ, միշտ տաճարներով պսակուած եւ ճկնորսների ցրիւ խրճիթները ափին:

Բացառիկ կերպով թափանցիկ օդը տալիս է տեսարանի եզրագծերին մասնաւորապէս պարզ ու փափուկ մի շեշտ:

Մշտական անդորրութիւնն ու հանգիստը թագաւորում են այ ծովի վրա: Տեղի չունեն այնտեղ փոթորիկն ու մրրիկը: Ջրերի կապոյտ մակերեսին ուրախ ու անփոյթ սլանում են սպիտակ ջօնկերը:

Սրանք երբեմն այնքան մեծ բազմութեամբ են հաւաքւում գիշերները ճկան որսի, որ նրանց ճրագները լոյսի մի անընդհատ երիզ են կազմում մեր ճամփի երկու կողմից. կարծես մի հսկայական լուսավառութիւն լինի՝ մեր շոգենաւի մուտքը տօնելու համար:

Միջերկրական ծովի հետ կապուած են անթիւ առասպելներ, որոնք բոլորն էլ պատկանում են ճապոնական դիցաբանութեան նախնական շրջանին: Աւանդութիւնը բանաստեղծօրէն պատմում է, թէ ինչպէս Իզանագի ու Իզանամի աստուածները, երկնքի շարժական կամուրջի վրա կանգնած, ցած են խրում ջրի մէջ իրանց ադամանդի նիզակը ու խառնում, մինչեւ որ հեղուկը պնդանում է նիզակի ծայրին: Նիզակը քաշում են ետ, իսկ նրա ծայրից կաթող պնդացած հեղուկից գոյանում են կղզիները: Դրանցից մէկն է ահա գեղեցիկ Ավաջի կղզին,